# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՋՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք, հասցե գ.Ջրաշեն
հեռ. (060) 80-30-80
էլ.Փոստ՝ jrashen.lori@mta.gov.am

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 23.01.2019 թվականի թիվ 01/107.4/00372-2019 հանձնարարականի Ձեզ ենք ներկայացնում Լոռու մարզի Ջրաշեն համայնքի ղեկավարի 20.02.2019 թվականի թիվ 2 որոշումը հավելվածով:

Առդիր 3 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՈՒՌՈՒՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք,
հեռ.(060) 80-30-80

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 20 » փետրվարի 2019 թվականի N 2

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 23.01.2019թ. թիվ 01/107.4/00372-2019 գրությունը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 12 կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, 41-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու մասին>> թիվ 46-Ն որոշման հավելված 1-ի 19-րդ կետով

Որոշում եմ.

1. Հաստատել <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ջրաշեն համայնքի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2019 թվականի հիմնական միջոցառումների>> պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ջրաշենի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին ապահովել սույն որոշման ծանոթացումը կատարողներին:

4. Սույն որոշման 1-ին կետով հաստատված պլանի միջոցառումների կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Ջրաշեն համայնքի ղեկավարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՈՒՌՈՒՍՅԱՆ

Հավելված.
Ջրաշեն համայնքի ղեկավարի
2019թ փետրվարի 20-ի
թիվ 2 որոշման

# ՊԼԱՆ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| ՀՀ ը/կ | Միջոցառումը և թեման | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Կատարողներ | Մասնակիցներ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| I ԱԻՆ ՓԾ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ | | | | | | |
| 1. Քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ | | | | | | |
| 1.1 | ՀՀ վարչապետի 2014թ. սեպտեմբերի 26-ի N 934-Ն որոշման համաձայն՝<br>Մասնակցություն Լոռու մարզի համայնքներում քաղաքացիական պաշտպանության, խաղաղից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման, տարահանման պլանների, տարահանման մարմինների, գործունեության կայունության բարձրացման հանձնաժողովների և ՔՊ ոլորտը կարգավորող այլ փաստաթղթերի ուսումնասիրության, մշակման և ճշգրտման, ինչպես նաև պաշտպանական կառույցների պահպանման, նախատեսման և կառուցման ուղղություններով մեթոդական և գործնական օգնության ցուցաբերմանը | հունիս | Համայնքի ղեկավար | Համայնքի ՔՊ ղեկավար կազմ, տարահանման հանձնաժողով | | |
| 1.2 | Մասնակցություն ռազմական դրության ժամանակ քաղաքացիական պաշտպա-նության միջոցառումների իրականացման համար ՀՀ Լոռու մարզի Ջրաշեն համայնքի | Տարվա ընթացքում | Համայնքի ղեկավար | Համայնքի աշխատակազմ | | |

| ՀՀ ը/կ | Միջոցառումը և թեման | Կատարման ժամկետը | Պատասխանատու | Կատարողներ | Մասնակիցներ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | տարածքում հաշվառված ինժեներական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից չառգրավվող ինժեներական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների քանակի ճշգրտմանը | | | | | |
| **II ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ** | | | | | | |
| **2. Պլանների և ծրագրերի մշակում** | | | | | | |
| 2.1 | «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ջրաշեն համայնքի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2020 թվականի հիմնական միջոցառումների պլանը հաստատելու մասին» Ջրաշեն համայնքի ղեկավարի որոշման նախագծի մշակում և համաձայնեցում Լոռու ՄՓՎ-ի հետ | մինչև 25.12 | Համայնքի ղեկավար | Համայնքի աշխատակազմ | | |

ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ ____________________

ստորագրություն, անուն, ազգանուն